

Շախմատի թագուհին

Ժամանակի սահմանափակում՝ 0.5 վայրկյան

Հիշողության սահմանափակում՝ 256 MB

Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Հայտնի է, որ թագուհին ամենահզոր խաղաքարն է շախմատում: Նա կարող է շարժվել 8 ուղղություններով: Պետք է գրել ծրագիր, որը հաշվում է, թե հակառակորդի քանի խաղաքարի են հարվածում սպիտակ և սև թագուհիները: Համարել, որ կա առավելագույնը մեկ սև և առավելագույնը մեկ սպիտակ թագուհի: Հիշեցնենք, որ թագուհին շարժվում է հորիզոնական, ուղղահայաց ուղղություններով և անկյունագծերով:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է շախմատի դիրքը՝ սիմվոլների 8 տող, յուրաքանչյուրում 8 սիմվոլ: Սև խաղաքարերը նշված են b տառով, սպիտակ խաղաքարերը՝ w տառով, սպիտակների թագուհին նշված է Q տառով, սևերի թագուհին՝ q տառով:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել մեկ տող, որը պարունակում է երկու թիվ: Առաջին թիվը պետք է ցույց տա, թե քանի սև խաղաքարի է հարվածում սպիտակ թագուհին, երկրորդ թիվը պետք է ցույց տա, թե քանի սպիտակ խաղաքարի է հարվածում սև թագուհին: Եթե սև կամ սպիտակ թագուհին բացակայում է, ապա համապատասխան արժեքը պետք է լինի -1 :

Օրինակ

Մուտք	Ելք
.....ww wb..q...b....Q.bw...	3 2